ՍՈՄԱՏՈՍՏԱՏԻՆԻ ԴԵՐԸ ՈՐՈՎԱՅՆԻ ԽՈՌՈՉՈՒՄ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ ԻՆԴՈՒԿՑՎԱԾ ԿՊՈՒՄԱԳՈՅԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԴԵՊՔՈՒՄ ՌԵՊԱՐԱՏԻՎ-ՊՐՈԼԻՖԵՐԱՏԻՎ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԻ ՁԱՎԱՎՈՐՄԱՆ ՖԻԲՐՈՆԵԿՏԻՆ և eNOS ԿԱԽՅԱԼ ՊՐՈՑԵՍՆԵՐՈՒՄ

Զիլֆյան Ա.Վ.[1], Ստեփանյան Ս.Ա.[2], Ավագյան Ս.Ա.[1], Մեսրոպյան Ռ.Ն.[2]

[1] Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն, Երևան, Հայաստան

[2] Երևան Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի վիրաբուժության թիվ 1 ամբիոն, Երևան, Հայաստան

Ֆիբրոնեկտինը կարևոր դեր ունի շարակցական հյուսվածքի տարբերակման բոլոր էտապների ախտահարման պայմաններում: Այն նշանակություն ունի նաև կպումագոյացման պրոցեսներում՝որովայնի խոռոչի վիրահատական միջամտություններից հետո: Կպումագոյացման և որովայնի խոռոչի կպումային հիվանդության կանխարգելման համար կիրառվում են տեղային (հակակպումային պատնեշներ) և ընդհանուր ազդեցության միջոցներ: Կատարվել են կոմպլեքս հետազոտություններ (մորֆոլոգիական, իմունոմորֆոլոգիական և պլանիմետրիկ)՝ ուսումնասիրելու համար փորձարարական ինդուկցված կպումային պրոցեսի բնույթը և ընթացքի առանձնահատկությունները՝նատրիումի հիալուրոնատի ներորովայնային կիրառման և սոմատոստատինի ենթամաշկային ներարկման պայմաններում:

Փորձերը կատարվել են, 130-150 գ. զանգվածով, 86 սպիտակ արու առնետների վրա: Կպումագոյացման ինդուկցիայի փորձարարական մոդելն իրականացվել է նեմբուտիլով անզգայացման ժամանակ՝առպատային և ընդերային որովայնամզի քերման միջոցով:

Ուսումնասիրվող կենդանիներ բաժանվել են 4 խմբի. հսկիչ խումբ (կպումագոյացման ինդուկցիայի փորձարարական մոդել) և փորձնական խմբեր համապատասխանաբար 1 խումբը (Սեպրաֆիլմի խումբ), 2-րդ (Սանդոստատինի խումբ) և 3-րդ (Սեպրաֆիլմի և Սանդոստատինի համակցում): Կենդանիները փորձից դուրս են բերվել 3-րդ, 5-րդ, 8-րդ և 14-րդ օրերը:

Փորձարարական կենդանիներին սոմատոստատինի ենթամաշկային ներարկումն ուղեկցվել է հատիկավոր հյուսվածքի հավասարակշռված աճով, շարակցական հյուսվածքի հետագա հասունացմամբ, որում գրեթե չեն առաջացել սկլերոտիկ փոփոխություններ: Անցկացված իմունոմորֆոլոգիական հետազոտությունների շնորհիվ, ստացված արդյունքների հետագա պլանիմետրիկ վերլուծությամբ հայտնաբերվել է նոր սոմատոստատին-կախյալ մեխանիզմ, որն ընկած էր ֆիբրոնեկտինի սինթեզի համար պատասխանատու տեղային ընթացող պրոցեսների հիմքում: Շրջանային բորբոքային պրոցեսի ընթացքի համեմատաբար ուշ փուլում ֆիբրոնեկտինի in situ ուժեղացած սինթեզի ընթացքի վրա սոմատոստատինի մեր կողմից հայտնաբերված ճնշող ազդեցությունը բարենպաստ է անդրադարձել բորբոքային պրոցեսի բնույթի և առանձնահատկությունների վրա, ինչը, որպես կանոն, ավարտվել է վերքային դեֆեկտի վերականգնմամբ, առանց կպումների ձևավորման և վերականգնվող հյուսվածքների ձևախախտման:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY